

ԱՆԴՐԱՍՅԱՆ Մ. Ա.

Ամերիկյան արձակում արվարձանի մասին առասպելը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ, երկրի տնտեսական աճով պայմանավորված, ամերիկացիները տեղափոխվեցին քաղաքամերձ բնակավայրեր։ Միացյալ Նահանգների բնակիչների համար «արվարձան» ասվածը կարծես ուստոպիական իդեալ էր, որը խոստանում էր ֆիզիկական առանձնացում քաղաքային «չար» միջավայրից։ Քաթրին Ջուրքան իր «Սպիտակ սփյուռք։ Արվարձանը և XX դարի ամերիկյան վեպը» (*White diaspora: The Suburb and the Twentieth-Century American Novel*) գրքում գրում է, որ բնակչության կենտրոնացումն արվարձանում ամենից նշանակալի իրադարձությունն էր ժամանակակից Ամերիկայի հասարակական և քաղաքական կյանքում։ Վիլիամ Շարփը և Լեոնարդ Վալոքը, առանց չափազանցնելու, նշում են, որ Միացյալ Նահանգների բնակիչները դարձան «արվարձանային ազգ»²։ Կ. Ջուրքայի բնորոշմամբ՝ արվարձանը Ամերիկայի օրինակելի տարածքն է³։ Ամերիկյան իշխանություններն աջակցում էին արվարձանների զարգացմանը՝ կառուցելով մայրուղիներ և այլ ենթակառուցվածքներ։ Կառավարությունը և անհատ ներդրողները գիտակցում էին ընտանիքներին աջակցելու՝ գերծանրաբեռնված քաղաքային կենտրոններից ծայրամասեր տեղափոխելու կարևորությունը՝ վայելելու խաղաղ ընտանեկան կյանք։ Արվարձանային ազդակը բխում էր և՛ պետական, և՛ մասնավոր ներդրողների շահերից։ Արվարձանում տուն սեփականացնելու հարցերին աջակցելուն ուղղված անմիջական պետական առաջին քայլերից էր «Բնակարանա յին շինարարության մասին» ազգային օրենքը (նոյի մեջ մտավ 1934 թ.)՝ որպես նոր ուղղության քաղաքականության մի մաս, որն էլ ավելի հասանելի դարձրեց գրավադրումներն ամերիկյան ընտանիքների համար։ Սա այն պատճառներից մեկն է, ըստ որի, ուրբանիզացիան անմիջական հետևանքն է վարած մի շարք քաղաքականությունների, որոնք

¹ Catherine Jurca, *White Diaspora: The Suburb and the Twentieth-Century American Novel*, Princeton University press, 2001, p. 5.

² William Sharpe and Leonard Wallock, *Bold New City or Built-Up Burb, Redefining Contemporary Suburbia*, *American Quarterly* 46.1, 1994, p. 1.

³ Catherine Jurca, նշվ. աշխ., էջ 4:

միավորվեցին ուրբանիզացիայի տարածումը խթանելու համար⁴։ Արվարձանային իդեալը և դրան հասնուկ ապրելակերպը դարձան կարևոր մշակութային երևույթներ։ Արվարձանն ընկալվում էր որպես հովվերգական ապաստան, որը երեխաների դաստիարակության համար ապահովում էր մաքուր և ապահով միջավայր։ Ամերիկացիների այս ձգտումները, Ջոն Ստիլ-գոյի մեկնաբանմամբ, ներկայացվում է որպես «Մարդու երազած հարմարավետ կյանքը հոգեհարազատ համայնքում, ընտանիքի երջանկության երազը»⁵։ Այլ կերպ ասած՝ ամերիկյան արվարձանային իդեալը կարող է դիտվել ամերիկյան երազի բնական ապոթեոզը՝ մի վայր, որտեղ մարդն ունի անձնական հետաքրքրություններ՝ կարող է հանգստանալ, ունենալ հաճելի զգացողություններ, ֆինանսական հարաբերություններում՝ խաղաղություն և ընտանեկան միություն։ Ջոն Չիվերը Մինքլեր Լուիսի, Սլոան Վիլսոնի ու Ջոն Ափդայքի նման իր ստեղծագործություններում մեծ ուշադրության է արժանացրել ամերիկյան արվարձանին և նրա ներսում ապրող մարդուն։ Ավելին՝ Ջ. Չիվերին և Ջ. Ափդայքին գրականագետները համարում են ամերիկյան արվարձանային գրական ավանդույթի ենթադրյալ հայրեր⁶։ Հարկ է դիտարկել այն հանգամանքը, որ շատ գրաքննադատների հիմնական դժգոհությունը, ուղղված Չիվերին, նրանում է, որ գրողը հանդես է գալիս որպես միջին դասի և արվարձանային միջավայրի ջատագով։ Գրականագետ Ալֆրեդ Քազինը դժգոհում է այն գրողների սահմանափակությունից, որոնք կենտրոնանում են միայն մեկուսացված անհատի կամ հասարակության նեղ հատվածի վարքուբարքը նկարագրելու վրա։ Ավելի ուշ «Կյանքի լուսավոր գրքում»։ Ամերիկյան վիպագիրները և պատմվածքագիրները Հեմինգուեյից մինչ Մեյլեր» (*In Bright Book of Life: American Novelists and Storytellers from Hemingway to Mailer*) հոդվածում գրում է, որ Չիվերի վաղ շրջանի պատմվածքներում արտահայտվում է գրողի հոգեկան դժգոհ վիճակը։ Քազինը Չիվերի պատմվածքներն անվանում է «Փրոքսմար Մանոր բնակավայրում բնակվող հարուստ, թվացյալ ընտանեկան մարդկանց զարմանալի տխրության, դատարկության և կյանքի անգոյության դրսևորում»⁷։ Այնուա-

⁴ Andres Duany, *Suburban Nation: The Rise of Sprawl and the Decline of the American Dream*, North Point Press, New York, 2000, p. 7.

⁵ Catherine Jurca, ⁵ Andres Duany, *Suburban Nation: The Rise of Sprawl and the Decline of the American Dream*, North Point Press, New York, 2000, p. 7.

⁵ Catherine Jurca, նշվ. աշխ., էջ 6:

⁶ Նույն տեղում, էջ 161:

⁷ Alfred Kazin, O. Hara, Cheever & Updike, R. G. Collins, *Critical Essays on John Cheever*, Boston, Massachusetts, G. K. Hall, 1982, p.122.

մենայնիվ, Չիվերն արձագանքում է գրականագետների նման վերաբերմունքին: Հարցազրույցներից մեկում նա ասում է. «Որքան շատ է միջին դասի ապրելակերպին ուղղված քննադատությունը: Կյանքն արվարձանում կարող է լինել ճոխ և լավ, ինչպես որևէ վայրում: Ես չեմ, որ պետք է լինեմ սոցիալական քննադատ կամ ամերիկյան արվարձանի պաշտպան: Իմ պատմվածքի հերոսները և նրանց հետ տեղի ունեցող դեպքերը կարող են պատահել ամեն տեղ»⁸: Չնայած գրողի այս պնդմանը՝ գրաքննադատ-ներին մտահոգում էր, թե Չիվերի արձակում ինչն է դիտարկվում որպես միջին խավի արժեքների հաստատում: Չիվերի համար արվարձանային տարածքը հետաքրքիր վայր էր մարդու և այդ տարածքի միջև հարաբերությունների ուսումնասիրության առումով, ինչպես նաև հասկանալու, թե ինչպես է արվարձանը փոխակերպում իր հերոսների հանցանքները գործողությունների, նկարագրում է արվարձանի պատրանքային բնույթի և միջին դասի կյանքի փխրուն հիմքերի հակասականությունը: Չիվերի՝ ամերիկյան արվարձանի նկատմամբ խոր հետաքրքրության վերաբերյալ դրական կարծիքներ նույնպես հնչել են: Գրող Ջոն Ափդայքը գրում է, որ Չիվերը հաճախ էր բնորոշվում որպես արվարձանային գրող, և թեև շատերն են գրել արվարձանի մասին, միայն Ջոն Չիվերը կարողացավ այն վերածել նախատիպային տարածքի⁹: Ըստ Ջոն Դայերի՝ արվարձանները բարոյագուրկ վայրեր են, որտեղ մարդիկ հակված են արհամարհելու միմյանց: Եվ սա է պատճառը, որ Չիվերի պատմվածքների հերոսները, այսպես ասած, բարոյական երկվորյուններում հաճախ իրենց մեկուսացած են զգում, հետևաբար, սեփական տառապանքները մեղմելուն ուղղված նրանց քայլերը հաճախ ուրիշները մատնում են անուշադրության: Նրանց գործողությունները սովորաբար ավելի շատ իրենց վնասում են, քան օգնում¹⁰: Ի հակադրություն այն ամենի, ինչին Չիվերի հերոսները կուզեին հավատալ, նրանց կյանքը լի է խնդիրներով: Արվարձանային ավանդույթները, բարքերը ներկայացնելուն զուգընթաց՝ Ջոն Չիվերը ցույց է տալիս այն արատավոր երևույթները, որոնք միննույն ժամանակ արվարձանային իդեալի շեղումներն են: Ջ. Չիվերը ներկայացնում է արվարձանի ձևական բնույթը և թույլ տալիս ներթափանցելու նրա արտաքուստ փայլուն մակերևույթից ներքև, նկատելու նախապես թաքնված

⁸ Rollene Waterman, *Biographical Sketch* (Saturday Review, 13 Sept. 1958, p. 33).

⁹ Martin Chilton, John Cheever, the Chekhov of the suburbs//<http://www.telegraph.co.uk/culture/books/booknews/9288456/John-Cheever-Master-of-the-short-story.html-02.03.15/>

¹⁰ John Dyer, John Cheever, Parody and The Suburban Aesthetic, // <http://xroads.virginia.edu/~ma95/dyer/cheever4.html-04.01.2016/>

արատները: Այս ճանապարհով Չիվերը բացահայտում է արվարձանային իդեալի պատրանքային բնույթը: Ինչպես Ջ. Դայերն է գրում, Չիվերի արվարձանակներն անընդունակ են խուսափելու իրենց ներքին մղումներից, որը կարող է ստվեր նետել համայնքի վրա¹¹: Ջ. Չիվերի հերոսներից շատերն ապրում են երկակի կյանքով: Նրանք կա՛մ օրինապահ քաղաքացիներ են, կա՛մ հարբեցողներ: Ինչպես «Խմիչքի տխուր հետևանքները» («The Sorrows of Gin», 1953) պատմվածքում է: Խմիչքն առաջնային դեր ունի Լոութոնների ընտանիքի տարաձայնությունների հարցում: Պատմվածքներում ալկոհոլի օգտագործումը ներկայացվում է որպես ամենախոշոր թերությունն արվարձանային իդեալի համար ոչ միայն այն պատճառով, որ հիմնականում դառնում է ընտանեկան գոտաբանության հիմք, այլև, որ պուրիտանական սկզբունքները դեմ են դրան: Համաձայն այդ սկզբունքների՝ սթափությունը և ինքնատիրապետումն առաջնային են¹²: Պատմվածքում Չիվերը ներկայացնում է դեռատի աղջկա՝ Էմմի Լոութոնի փորձությունները: Էմմին արվարձանի սոցիալական կյանքի մասը չէ և երկրորդական դեր ունի իր ծնողների ընթրիքային խնջույքների ժամանակ: Այդ աղջկա կերպարով Չիվերը ներկայացնում է արվարձանային իրականության երեք մտահոգիչ հարցեր: Առաջին՝ ինչն է դրդում Էմմին հոր խմիչքը թափել լվացարանում, երկրորդ՝ նրա որոշումը՝ Շեյդի Հիլից հեռանալ դեպի քաղաք, և վերջինը պատմվածքի ավարտն է, երբ հայրը մեկնաբանում է տունը լքելու և հեռանալու անիմաստությունը: Էմմիի ծնողները շատ ակտիվ ապրելակերպ ունեն Շեյդի Հիլի համայնքում: Նրանք ճանաչված և ցանկալի են երեկույթների ժամանակ: Մի գիշեր, երբ Լոութոնները նորից գնացել էին խնջույքի, խոհարար Ռոզմարին Էմմին պատմում է իր քրոջ մասին, որ մահացել էր շատ խմիչք օգտագործելու պատճառով. «Խմիչքը դարձնում է որոշ մարդկանց մի տեսակ անհոգ: Ստիպում է նրանց և՛ ծիծաղել, և՛ լաց լինել, բայց քրոջս այն դարձրեց մոռյալ և ինքնամոռի: Խմիչքով տարվելուց հետո նա սկսում է մեկուսանալ: Նա մահացավ Բելվյու հիվանդանոցում ամառային մի օր, երբ աշխատում էի Մեյնում: Նա իմ միակ հարազատն էր»¹³: Ռոզմարիի պատմածի ազդեցությամբ փոքրիկ աղջիկը հոր խմիչքը թափում է լվացարանում: Շատ անգամ Էմմին նկատում է, թե ինչպես է ալկոհոլը մեծահասակների գործողությունները դարձնում տարօրինակ: Նրա ծնող-

¹¹ Նույն տեղում:

¹² Marta Kvasnicova. *The New England Puritanism*, Praha, FF UK, 1950, p. 23.

¹³ John Cheever. *The Stories of John Cheever*, A. Knopf, New York, 1978, p. 199.

ներն իրենց վարքագծում այնքան արհեստական են, որ Էմմին նրանց ու ընկերներին համեմատում է դերասանների հետ. «Նա մի անգամ տեսել է, թե ինչպես է տիկին Ֆարքուարսոնը բաց թողնում աթոռը, որին պետք է նստեր, և վայր ընկնում հատակին, բայց որն է մեկը չծիծաղեց: Նրանք ձևացրին, թե տիկին Ֆարքուարսոնը վայր չի ընկել: Նրանք նման էին դերասանների»¹⁴: Երբ խոհարար Ռոզմարին քաղաքից վերադառնում է հարբած, Էմմին համոզվում է մեծերի կեղծավոր լինելու մեջ, քանի որ օրեր առաջ նույն Ռոզմարին խոսում էր խմիչքի վնասակար լինելու մասին: Այս անսպասելի շփոթը ստիպում է նրան նորից խմիչքը թափել լվացարանի մեջ. «Երբ Էմմին ներս մտավ, մայրն իջավ աստիճաններից՝ հարցնելու, թե արդյոք Ռոզմարին վերադարձել է: Էմմին չպատասխանեց: Նա գնաց խմիչքների մոտ, վերցրեց բացված օդու շիշը և այն դատարկեց լվացարանում: Նա ուզում էր լաց լինել, երբ հանդիպեց մորը հյուրասենյակում ու պատմեց, որ հայրը Ռոզմարին հետ է ուղարկել կայարան»¹⁵: Այսպիսով, Էմմիի փորձերը ծնողներին և նրանց ընկերներին օգնել հաղթահարելու այսպես ասած «խմիչքի տխուր հետևանքները», ապարդյուն են անցնում: Արդյունքը լինում է այն, որ նա կորցնում է մեծահասակների նկատմամբ հավատը: Միգուցե ակոհող օգտագործելու միջոցով Չիվերը դրդում է իր հերոսներին հրաժարվել արվածանի սոցիալական կարգուկանոնից, քանի որ կոկտեյլային երեկույթների ժամանակ այդ կանոնները չեն գործում: Երբ պարոն Լոուրոնը գտնում է օդու շիշը դատարկ, նա զրպարտում է դայակին՝ մեղադրելով խմիչքների սենյակը ներխուժելու համար: Տիկին Հենլեյնը զայրանում է, որ պարոն Լոուրոնը կարող է նույնիսկ ենթադրել, որ ինքն է գողը: Մեծ աղմուկ է բարձրանում, Էմմին լսում է վեճը: Տեղի ունեցածը կրկին շփոթեցնում է նրան: Նա զգում է, որ վիճաբանությունն իր պատճառով է և որոշում է փախուստի դիմել: Հաջորդ օրը գնում է կայարան և պատրաստվում քաղաք մեկնող գնացք նստել: Էմմին մտածում է, որ Նյու Յորքում կարող է մնալ ընկերների տանը կամ կթաքնվի թանգարանում: Երկու վայրերի ընտրությունը պայմանավորված է ավելի պարզ միջավայր վերադառնալու՝ աղջկա մեծ ցանկությամբ, որտեղ շրջապատված կլիներ իր նմաններով: Խմիչքը լվացարանում թափելը աղջկա հոռետեսական մտքերի հետևանքն է, որը հակասում է մեծահասակների կանոններին և ընդգծում նրա հիասթափության

¹⁴ Նույն տեղում, էջ 205:

¹⁵ Նույն տեղում, էջ 202:

զգացողությունը: Զիվերն այստեղ ներկայացնում է հովվերգական առասպելը:

Որպես կանոն՝ գրական հերոսը հովվերգական ավանդույթում քաղաքը տեսնում է որպես աններդաշնակ վայր, սակայն Էմմին հակառակն է տեսնում: Հիմնական պատճառը, թե ինչու է Էմմին ուզում դուրս պրծնել արվարձանից, նույնն է՝ ինչ այնտեղ հայտնվելը:

Օրինակ՝ ինչը ստիպեց խոհարար Ռոզմարին հարբած վերադառնալ քաղաքից: Պատմվածքն ավարտվում է նրանով, որ պարոն Լոուրոնը, կայարանում տեսնելով Էմմին, մտորում է՝ ինչպե՞ս կարող է համոզել դստերը, որ տունը նրա համար ամենից լավ վայրն է. «Ինչո՞ւ է նա ուզում փախչել: Ինչպես բացատրել նրան, որ տունը ամենից լավ վայրն է»¹⁶: Ըստ էության, պարոն Լոուրոնն ուզում է դստերն ասել, որ Շեյդի Հիլի արվարձանի սահմաններից դուրս ընտանեկան խնդիրները չեն լուծվի: Այդ կարող է միայն հեռացնել նրան իր արմատներից: Պարոն Լոուրոնի համար տունը իրական կյանքն է: Հանդիպելով դստերը կայարանում՝ թվում է՝ այդ պահին չի ընկալում նրա ներաշխարհում տեղի ունեցածը: Կարծում է, որ աղջիկը կախում ունի իրենից, մինչդեռ հակառակն է՝ այդ պահին Էմմին նրանից անկախ է: «Արդեն մութ էր, պարոն Լոուրոնը հասավ կայարան: Նա տեսավ դստերը կայարանի պատուհանից: Աղջիկը նստած էր նստարանին: Շոյեց նրան, ասես դա եղել է միայն այն ժամանակ, երբ նա անօգնական է եղել կամ հիվանդ»¹⁷: Լոուրոնը կարծում է, որ Էմմիի փախուստը հիվանդության նշան է, որը պետք է բուժել, սակայն Էմմիի համար մեկնելը փախուստ է հիվանդությունից, հարբած մեծահասակների և խոհարարների բարդ աշխարհից: Գրողը արվարձանում տեսնում է այլ արատավոր երևույթներ ևս, ինչպես, օրինակ, մարդկանց բնական հակվածությունը ասեկոսեների նկատմամբ: «Պարզապես ասա ինձ, նա ով էր» (*«Just Tell Me Who It Was»*, 1955) պատմվածքում աղմկահարույց պարահանդեսը տարբեր շշուկների տեղիք է տալիս: Պատմվածքի գլխավոր հերոս Ուիլ Պումն այնքան երջանիկ է, որ ունի գեղեցիկ տուն, ընտանիք, վայելում է արվարձանի առաջարկած բոլոր հարմարությունները: Ուիլը մեծացել է Բալթիմորում, պատահական աշխատանքներ կատարել և այժմ ֆիրմայի փոխնախագահ է: Նա սիրում է իր տունը և շատ է հպարտանում Շեյդի Հիլում ունեցած իր դիրքով: Այնուհանդերձ, նրա կյանքի էությունն իր կինն է՝ Մարիան: Խնձորենիների ծաղկման ամենամյա տոնը

¹⁶ Նույն տեղում, էջ 209:

¹⁷ Նույն տեղում:

մոտենում է: Մարիան ընդգրկվել է զարդարանքների հանձնաժողովի կազմում: Փառատոնը զգեստների պարահանդես է, և պարզվում է, որ լինելու է անցած տարիների նման: Ուիլը դեմ է, որ Մարիան հագնի լայն բացվածքով հագուստ, քանի որ կասկած չկա, որ դրանում նա շատերի մեջ հետաքրքրություն կառաջացնի: Մինչդեռ Մարիան չի կարող հասկանալ ամուսնու վերաբերմունքը, նա միայն ցանկանում է լավ ժամանակ անցկացնել: Նա լալիս է, խնդրում, որ Պուլը թույլ տա հագնելու այդ զգեստը: Ուիլը չի կարող դիմակայել կնոջ ցանկությանը. «Դու ցանկալի ես և անմեղ, - ասում է Պուլը, - դու չգիտես՝ ինչ տեսակի մարդիկ կան»: «Ես չեմ ուզում լինել ցանկալի և անմեղ մշտապես: Ես ուզում եմ միայն լավ ժամանակ անցկացնել»: «Օ, Մարիա, դու չես հասկանում այդ, դու չես հասկանում, թե ինչ ես ասում»¹⁸: Ուիլը չի կարող գիտակցել, որ Մարիան ունի իր ներքին ձգտումները: Նրա համար խնդիրն այն է, որ չի կարող կնոջ վրա ինչ-որ կերպ ազդեցություն ունենալ: Ուիլի սերը պաշտամունքի է վերածվել, և եթե նրա զգացմունքային վիճակը այդպիսին չլիներ, կնոջ համառությունը, միգուցե, նման հարված չհասցներ: Տոնախմբությունն Ուիլի խանդավառության ավարտի սկիզբն է: Երեկոյթի ընթացքում Ուիլը վշտացած է կնոջ ուշադրության պակասից և հեռանում է ավելի վաղ: Երբ Մարիան ավելի ուշ վերադառնում է տուն, նա սկսում է կասկածել կնոջը անհավատարմության մեջ: Իրավիճակն ավելի է սրվում հարևանների խոսակցություններից, թե ինչ տեղի ունեցավ, երբ նա լքեց պարահանդեսը: Ամուսնական խնդիրների թեմայով սեմինարի ժամանակ Ուիլը լսում է, թե ինչպես են հարևանները բամբասում իր թիկունքում և փորձում տեղեկատվություն կորզել իր ամուսնության մասին: Երբ հարևան Էդիթ Հասթինգսը հետաքրքրված էր, թե երբ են մարդիկ հեռացել երեկոյթից, Պուլը կտրուկ շրջվում է և ասում. «Եկել էք այստեղ այդ մասին խոսելու»¹⁹: Կնոջ նկատմամբ անհավատարմության կասկածների պատճառով Ուիլը սկսում է անհավատարմության նշաններ տեսնել ամենուր: Ուիլ Պուլը, ի վերջո, որոշում է պաշտպանել կնոջ պատիվը և պատժել նրան, ով գրավել էր կնոջը: Կայարանում տեսնելով կնոջ թվացյալ սիրեկանին՝ Հենրի Բուլսթրոդին, հարվածում է նրան: Այս գործողությունները հանգեցնում են նրան, որ Պուլը վերսկսում է իր կյանքը Մարիայի հետ: Պատմվածքը վերջանում է այնպես, ինչպես սկսվել էր: Պուլի դերը Շելդի Հիլում վերահաստատվում է, թեկուզ սեփական գիտակցության մեջ: Այսպիսով տեսնում ենք, որ բամ-

¹⁸ Նույն տեղում, էջ 374:

¹⁹ Նույն տեղում, էջ 384:

բասանքը և կեղծավորությունը պատճառ են դառնում արվարձանի բնակիչների փոխհարաբերությունների ոչ ազնիվ լինելուն և հաճախ հանգեցնում այդ հարաբերությունների անորոշությանը, անվստահությանը և կասկածամտությանը: Դրանք էլ իրենց հերթին բերում են տարբեր զգացմունքային վիճակներ՝ հոգեկան խռովք, ճնշվածություն, միայնության զգացողություն: Այս երևույթները բխում են ծայրամասային հարաբերությունների արհեստական բնույթից: Արվարձանում մարդիկ ձևացնում են, թե սիրում են իրար, և ամեն ինչ հիանալի է: Այսպիսով, այն խնդիրները և թերությունները, որ կան Չիվերի պատմվածքներում, բխում է արվարձանի և, ըստ էության, մարդկային բնույթի անկատարությունից: Չիվերի արվարձանը բնորոշվում է նաև իր ներքին սահմանափակություններով, կարգ ու կանոններով, որոնցով էլ պայմանավորվում են այստեղ բնակվողների միջև հարաբերությունները: Արվարձանը և Չիվերի հերոսը կարծես սերտորեն փոխկապակցված են: Մարդն ազատ չէ արվարձանում իշխող օրենքների մեջ, ուստի ինքնուրույն գործել չի կարող, իսկ եթե հանկարծ փորձում է անկախանալ՝ բախվում է խոչընդոտների: Չնայած այս ամենին՝ Չիվերի պատմվածքները լավատեսական ավարտ ունեն. հերոսները ներքին ճգնաժամը կամ կոնֆլիկտը հաղթահարելուց հետո վերջիվերջո վերադառնում են արվարձանի թվացյալ ապահովությանը և այստեղ գտնում խաղաղություն:

ПРОБЛЕМА АМЕРИКАНСКОГО ПРИГОРОДА В РАССКАЗАХ ДЖОНА ЧИВЕРА

АНДРАСЯН М. А.

Резюме

Американский пригород характеризуется своими внут-ренними ограничениями, правилами, которыми обусловлены человеческие отношения.

Жизнь в пригороде подчинена определенным принятым в этой среде традициям, что лишает героев рассказов Чивера свободы действий. Попытки высвободиться из этих оков остаются безуспешными, поскольку они сталкиваются с множеством препятствий.

THE PROBLEM OF AMERICAN SUBURB IN THE STORIES OF JOHN CHEEVER

M. ANDRASYAN

Abstract

The life in the suburb is subordinated with traditions which is certain for that environment with the rules of life, which deprive the free action of Cheevers heroes. The attempts are remined unsuccessful to release from these fetters remain as they face with lot of obstacles.